ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 05.02.2019թ. հ.01/45Մ գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի հիման վրա Վարդաշենի 6-րդ փողոցի հ. 68ա շենքի հ.416, 418 բնակարանի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների տեղում կատարած ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ քննարկվող բնակարան ինքնակամ մուտք է գործել նույն շենքի հ.405 բնակարանի բնակիչ Աիդա Դոխոյանը և բնակարանում տեղավորել է իր հաշմանդամ հորը: ՀՀ ոստիկանության աջակցությամբ բնակարանն ազատվել է Աիդա Դոխոյանի ընտանիքի ապօրինի տիրապետումից ու հանձնվել է Երևան համայնքին: Աիդա Դոխոյանը նույնպես հավակնում է քննարկվող բնակարանին և Երևանի քաղաքապետարան հասցեագրված դիմումով վերջինս խնդրել է նշված բնակարանը հատկացնել իրեն: Վարդաշենի 6-րդ փողոցի հ.68ա շենքի հ.416, 418 բնակարանի տրամադրման հարցով Երևանի քաղաքապետարան բազմիցս դիմել է նույն շենքի հ.20 բնակարանի բնակիչ Սիրանուշ Տելյանը, ով Ալբերտ Վարպետյանի մայրն է: Վերջինիս տեղեկացվել է, որ, հիմք ընդունելով գործող օրենսդրությունը, համայնքի սեփականություն հանդիսացող համայնքի ենթակայության և տրամադրման տակ գտնվող տարածքների տրամադրումը կարող է իրականացվել գույքի օգտագործման տրամադրման օտարման տարեկան ծրագրով սահմանված կարգի համաձայն: Նշված կարգով բնակարանային պայմանների բարելավման և ապահովման նպատակով բնակարանների ուղղակի տրամադրման գործառույթներ Երևանի քաղաքապետին վերապահված չէ: Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման կարգը սահմանված է Երևան քաղաքի ավագանու 25.12.2018թ. հ.41-Ն որոշմամբ: Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ բարձրացված հարցը Սիրանուշ Տելյանի կողմից ներկայացվել է նաև Երևանի ավագանու խմբակցություններին՝ տեղեկացվում է, որ նպատակահարմարության և հիմնավորվածության պարագայում, հարցի կարգավորման անհրաժեշտությունից ելնելով, վերջիններս կարող են հարցը սահմանված կարգով ներկայացնել Երևան քաղաքի ավագանու քննարկմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ